Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2024 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի աշխատանքային ծրագրով 3-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Լրամշակել էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի №520-Ն որոշմամբ հաստատված՝ Էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան, սակագների սահմանման ու վերանայման կարգը:
- Լրամշակել էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը:
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաժանորդներին տուժանքների վճարման պարտավորությունների կատարման մոնիթորինգ:
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ:

- Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր իրականացնող լիցենզավորված անձանց կողմից 2023 թվականին կատարված ներդրումների փաստացի ծավալները և ամփոփել արդյունքները:
- Իրականացնել հանրային կազմակերպությունների 2023 և 2024 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ:
- Մշակել առաջարկություններ 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագծի շրջանակներում ռադիոհաճախականության թույլտվությունների տրամադրման և ռադիոհաճախականության օգտագործման վճարների մասով և ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:
- Մշակել առաջարկություններ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի լրամշակման վերաբերյալ:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստերի հրավիրման, անցկացման և գրավոր քվեարկության կազմակերպման կարգը:
- Մշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի գործունեության ծրագիրը և հրապարակել հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,

- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի, էլեկտրոնային հաղորդակցության և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները,
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցերին, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացումների եռամսյակային ցուցանիշները: